ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի 019-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է**.

1. Ազգային ժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 25-ի «Միջխորհրդարանական հանձնաժողովներում Ազգային ժողովի ութերորդ գումարման պատվիրակությունների կազմերը հաստատելու մասին» ԱԺԽՈ-019-Ա որոշման՝

1) 1-ին հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Արցախի Հանրապետության Ազգային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովում, «Նազելի Բաղդասարյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Արթուր Հովհաննիսյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով,
2) 4-րդ հավելվածում՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի միջև համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովում, «Նազելի Բաղդասարյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերը փոխարինել «Վահե Ղալումյան «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն» բառերով:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2021 թվական, դեկտեմբերի 6
Երևան
ԱԺԽՈ-031-Ա